

մնացորդը Դեռ վերջին՝ ժամանակներում այդ աղնուապետութիւնը խմբուել էր սպիտակ գրօշի և Բուրբոնեանց վերջին ներկայացուցիչ կոմս Շամբօրի շուրջը, իսկ նորա մահի հետ Լեգիտիմիզմը 1) կորցրեց բոլոր յոյսը Բէստաւրացիայի Լեգիտիմիստ միապետութեան, Նախա. մտադրած միութիւնը Լեգիտիմիստների 2) Օրլէանեանների հետ հաղիւ. թէ կըկայանայ երբ և իցէ, Փարիզի կոմսը հանգուցեալ կոմս Շամբօրից Փրանսիական դահի իբր ժառանգ ծանանչուած՝ բնաւ չի հրաժարուիլ Օրլէանեան տան քաղաքական աւանդութիւններից, ազատասիրական սահմանադրական միապետութիւնից, իսկ Լեգիտիմիստները իրանց կողմից չեն հրաժարուիլ ո՛չ սպիտակ գրօշից, ոչ աւանդական ճիւղից, ո՛չ կղերականութիւնից, նոցա դաշնակցութիւնը կղերականութեան հետ ունի իսկապէս նոյնպէս իւր պատմական պատճառը:

(Շ-բ-ն-ի-ի)

(Թ-բ-ի-) Զ. Տէր Զաքարեանց

ՖԱՐԻՑԻՈՒՍ.

ԴՐԱՄԱՅ ԵՐԵՔ ԱՐԱՐՈՒԱԾՈՎ.

ՀԵՂԻՆԱԿՈՒԹԻՒՆ ԱԴՕՅԼՔԱՅ ՎԻԼԻՐԱՆԴՅ.

ԴՈՐԾՈՂ ԱՆՁԻՆՔ.

ԷՂԵՆՇՈՒՆ, դատաստանական քննիչ:

ԲՕԼՖ, գործարանատէր:

ԻՔԱ ԲԷՂՈՐԴ:

Ագաթա Շտերն:

Զուգո, նորա որդին:

Քարրիցիուս:

Տիկին ՎՕԼՄՈՒՄ:

Դեմիէր՝ սենեկապան ԲՕԼՖի:

Արէլ, ԲՕԼՖի այգեպանը:

Բէթիէն.

Քրեդերիկա) ձեռնոց շինողներ:

1) Լեգիտիմիզմ. Լատ. վարդապետութիւն և կանոնադրութիւնները Լեգի. տիմիստների:

2) Լեգիտիմիստ. Գերմ. Հաւատարիմ Թագաւորող տան օրինաւոր աղգատուհմ:

Դատաստանական պրիստաւ:

Դատարանի երկու դռնապահներ:

Երկու ոստիկան:

Գործողութիւնը կատարւումէ մեր ժամանակ Գերմանիայում՝ գաւառական քաղաքների մէկի մէջ:

ԱՌԱՋԻՆ ԱՐԱՐՈՒՄԻ

Առանձնասենեակ Բօլֆ գործարանատիրոջ բնակարանի մէջ. Գրասեղան հանդերձ թղթերով, գրքերով եւ լրագրներով, Գրքի պահարան, դիվան, մէկ քանի սեղանիկներ եւ բազկաթոռներ: Դէպի աջ՝ պատուհան, բեմի խորքումը գլխաւոր մուտքը: Գէպի ձախ՝ ուրիշ բաց դուռ:

ՏԵՍԱՐԱՆ ԱՌԱՋԻՆ.

ԲՕԼՖ. ՅԵՏՈՅ ԴԵՄԷՐ. ՎԵՐՁՈՒՄԸ — ԻԴԱ-ՐԵՏՆԳՕԼԴ.

Բօլֆ. (Մենակ նստած սեղանի մօտ՝ գրումէ. Յետոյ վեր է առնում թերթը և կարդումէ գրածը). «Եւ այսպէս, պարոններ, ես առում եմ, որ եթէ դուք ցանկանումէք ընտրել ձեզ համար ներկայացուցիչ, որ կարող լինի համակրել ճշշեալներին և անպաշտպաններին, որ չարհամարհի զղջացող յանցաւորներին, այլ աշխատի ժամանակ տալ նոցա ուղղուել իրանց բանտարկութեան ժամանակ, մինչև անգամ օգնի նոցա բանդից դուրս գալուց յետոյ օգտարիւր լինիլ հասարակութեան. — եթէ կրկնում եմ, դուք կամենումէք տեսնել ձեր ներկայացուցիչների թիւում այսպիսի համոզմունքներով մի մարդ, այն ժամանակ, հաւանական է, ես կարող եմ լինել նոցանից մէկը. Այն ժամանակ ես կասեմ ձեզ . . . »

Դեմէր. (Մտնումէ, նորա փոքր ինչ կարմրացած երեսը և անհաստ քայլուածքը ցոյց են տալիս, թէ զուարթացած է գինով. Պանգ է առնում դրան մօտ և առումէ փոքր ինչ հանդիսաւոր կերպով. Հաճեցէք հրամայել ձեր հաւատարիմ ծառային, Պ. Բօլֆ:

Բօլֆ. Ի՞նչ է ձեզ հարկաւոր:

Դեմէր. (Մօտենումէ). Հատ տարիներ ես միշտ աղօթք եմ անում ձեր բարօրութեան համար:

Բօլֆ. Դեմէր, դուք դա՞րձեալ խմածէք աւելորդաբար:

Դեմէր. Եւ շատ տարիներ ձեր առողջութիւնը պահպանելու՝ որ բազմաթիւ մարդկանց բարիք անէք . . . »

Բօլֆ. Խելքդ գլուխդ բիր, Դեմէր, Ի՞նչ բանի վերայ ես խօսում:

Դեմէր. Այնպէս էլ այսօր ես աղօթք էի անում ձեզ համար Սաղմոսերգոյի խօսքերով . . . »

Բօլֆ. Ինչո՞ւ համար հենց այսօր:

Դեմլեր. Նորա համար որ ձեր հանգուցեալ մայրը դեռ իւր կենդանութեան ժամանակ յանձնուէր միշտ շնորհաւորել ձեր ծնունդի օրը մեր թոյլ կարողութեան շափ:

Բօլֆ. (Դեռ բոլորովին հանտարդ), Էլի՞ խելքդ գլուխդ չէ: Իմ ծնունդի օրը այսօր չէ, այլ վաղը: (Դեմլեր ապշած նայումէ նորան), Վաղն է, ասումեմ:

Դեմլեր. Օհ, ինչպէս ես ցանկանում եմ, որ վաղուեան օրը, որքան կարելի է, շատ անգամ կրկնվէր: Այս խօսքերը ասումէ թէպէտ վաթսուն տարեկան ծերուէր, բայց ձեր մեծահոգի սրտի հետ լաւ ծանօթը, որովհետեւ դուք շատ անգամ օգնել էք ինձ իմ կեանքի դժուար բոլորներում:

Բօլֆ. Կրկնում եմ, որ իմ ծնունդի օրը այսօր չէ, այլ վաղն է:

Դեմլեր. Լսում եմ, ողորմած տէր, լսում եմ ամեն մէկ ձեր խօսքը և ուշադիր եմ բոլոր զօրութեամբս: Երբ որ ես փոքր ինչ խմած էի լիւնում, դուք միշտ . . .

Բօլֆ. Այո, ցաւում եմ, որ միշտ ձեզ հետ ներողամտութեամբ եմ վարուել: Գնացէք, թողէք ինձ, ես հիմա զբաղուած եմ:

Դեմլեր. Ո՛վ իմ բարի Պ. Բօլֆ, Թէպէտ ես սուրբ մարդ չեմ . . .

Բօլֆ. Իհարկէ, չէ:

(Իդա Բէյնգօլդ մտնումէ մնալով առանց նկատուելու. չի ծածկում իւր դարմացքը):

Դեմլեր. Բայց առանց հաւատի միւս կեանքում, մարդ անշուշտ կբկորչի:

Բօլֆ. Գիտեմ, հեռացէք:

Դեմլեր. Հիմա պէտք է ստորափոխ նայել մերձաւոր ապագայի վերայ թէ ընդհանրապէս և թէ մասնաւորապէս, վասն զի մարդկութիւնը ընկել է վտանգաւոր մոլորութեան մէջ:

Բօլֆ. Դէ վերջապէս, դուրս կերթա՞ք արդեօք:

Դեմլեր. Դուրս եմ գնում. . . Եւ ինչպէս լսում ես ամեն կողմից չեն հաւատում մարդիկ Աստծուն . . .

Բօլֆ (Վեր է կենում, հանդարտ, բայց խիստ կերպով), Բաւական է. շնորհակալ եմ ձեզանից, Դ՛ուրս գնացէք:

Դեմլեր. (Նայումէ նորա վերայ ուշադրութեամբ, յետոյ գլուխը շարժելով), Դ՛ուրս գնացէք, ինչպէս կը հրամայէք, խոնարհութեամբ համբուրում եմ ձեր ձեռքը:

Բօլֆ. (Անհամբեր կերպով), Դէ կը թողնէ՞ք արդեօք ինձ հանգիստ:

Դեմլեր. (Դարձեալ գլուխը շարժելով), Թողնում եմ հնազանդուելով հրամանի (Հեռանումէ ինքն իրան քրթմնջալով), Ես կը ցանկայի միայն իմ բարբարոս . . .

Բօլֆ. Գնացէ՛ք և զովացէ՛ք ինչպէս պէտք է:

Դեմիէր. (Քլուիւր շարժելով): Լաւ է, ինչպէս պէտք է կը դովանամ:
(Դուրս է գնում, չընկատելով Տ. Բէյնգօլդին, որ խօսակցութեան ժամանակ անցնումէ մեծի աջ կողմը և լսումէ զարմացման ժպիտով նորա խօսքերը):

ՅԵՍԻԼ ԵՐԿՐՈՐԴ.

ԲՕԼՖ. ԻԴԱ. — ԲԷՑԵՊՕԼԴ

Իդա. (Շքեղ հագնուած՝ կուրծքին ծաղիկներ): Բարեւ ձեզ Պ. Բօլֆ:
Բօլֆ. (Տեղիցը վերկենալով և տեսնելով նորան՝ զարմացած): Ես չեմ հաւատում իմ աչքերիս: Ես տեսնում եմ իմ տան մէջ Տ. Բէյնգօլդին:

Իդա. Այո՛, Բէյնգօլդին, երգչուհուն, որին կը յուսամ, գեռ մոռացած չէր: Սա մէկ էս այնպէս փոխուել եմ այն օրից, երբ դուք ինձ չէք տեսել:

Բօլֆ. (Դիտելով բացասական նշան տալով): Բոլորովին ընդհակառակը: Ես ապշել եմ ձեր մէջ ամենափոքր փոփոխութիւն չը գտնելովս:

Իդա. (Նորա խօսքերը ընդհատելով): Ես նոյնպէս ձեր մէջ փոփոխութիւն չեմ տեսնում: Զարմանում եմ. ինչպէս դուք չէք վնդում այդպիսի ծառային ձեր տանից:

Բօլֆ. (Ժպտալով): Ընդհակառակը նա ինձ պէտքէ երկայնմտութեան մէջ վարժուելու համար:

Իդա. Այդպիսի արքեպօղը:

Բօլֆ. Նա ունի իւր սե օրերը, որոնք երբեմն սկսում են առաւօտուանից. բայց նա — հին և անձնուէր ծառայ է. նա իմ հանգուցեալ հօր մօտն էլ էր ապրում: Իւր պարտաւորութիւնները շատ լաւ է կատարում: Երբ լուրջ է լինում:

Իդա. Իսկ այդ ե՞րբ է պատահում նորան:

Բօլֆ. Քիչ սառը ջրում լուացուելով նա շուտ է սթափուում, մէկ քառորդ ժամից յետոյ դուք նորան չէք ճանաչիլ. . . Բայց ի՞նչ խօսակցութիւն նորա մասին: Ես դեռ չեմ խնդրել ձեզ նստելու (հրաւիրումէ դէպի նստարան): Դէ ասացէք, ի՞նչ պատճառաւ ձեզ տեսնելու պատուին արժանացայ իմ տան մէջ:

Իդա. (Նստելով): Այս տեղից անցնելուս պատճառաւ միայն:

Բօլֆ. Հապա դուք ինչո՞ւ չը հրաւիրեցիք ինձ ներկայանալ ձեզ մօտ, այլ նեղութիւն էք յանձն առել գտնել ինձ:

Իդա. (Փոքր ինչ յուզուած): Ես ցանկացայ նայել, թէ դուք ինչպէս էք ապրում (ժպտալով): Կամեցայ տեսնել, թէ ճանաչո՞ւմէ արդեօր ինձ իմ նախկին երկրպագուն:

Բօլֆ. Օ՛հ, կրկնում եմ, այդքան տարիներից յետոյ ես չեմ տեսնում ձեր մէջ բոլորովին փոփոխութիւն:

Իգա. (Կատակ անելով և ախ քաշելով) : Մեր վերջին տեսութեան օրից անցած գնացած տարիների թուի մասին միայն մի յիշէք : Սակայն, ես ունիմ ուրիշ նպատակ էլ (հանելով փողի փոքր պահարան) յանձնել ձեզ նուէր յօգուտ ձեր հիմնած ընկերութեան : Ես գիտեմ, դուք — մարդկութեան բարեկամն էք . . . : Բայց մոռացել եմ այդ յարգանաց արժանի ընկերութեան անունը . . . :

Բօլֆ. Բանտարկութիւնից ազատուածներին օգնելու ընկերութիւն :

Իգա. Այո՛, հիմա ես միտքս բերի : (Վեր է կենում) : Վաղուց չէ որ ես կարգացի լրագիրների մէջ ձեր նշանաւոր ճառը անհրաժեշտ ընկերութիւնների հաստատելու կարեւորութեան մասին և յափշտակուած ձեր ճառով՝ շտապումեմ և իմ լոման ձգելու գրամարկղը . . . (Տալիս է նորան բանկի տոմս) : Խնդրումեմ ընդունել ինձանից այդ լիովին բարի և գեղեցիկ գործի համար :

Բօլֆ. Օ՛հ, Այդ գումարը շտապապէս մեծ է :

Իգա. Ընդհակառակը :

Բօլֆ. (Մօտենումէ գրասեղանին) : Ես միայն այժմ նկատումեմ ձեր մէջ փոփոխութիւն : Առաջ դուք փոքր ինչ ծաղր էիք անում մարդկութեան բարեկամներին . . . :

Իգա. (Սրտի խորքից ախ քաշելով) : Գիտեմ և յիշումեմ ամօթ ինձ : Առաջ ապրումէի միայն ինձ համար :

Բօլֆ. (Գրումէ ապահովագիր) : Կամենումէք ասել ձեր ճարտարութեան համար : Եւ ի՞նչ ճարտարութիւն : (Ծիծաղելով) : Ես յիշումեմ այն երեկոյթները, երբ լսումէի ձեր երգեցողութիւնը օպերայի մէջ : Խելքս թռչումէր : Եւ ռժբան ծաղիկների զափնեայ փունջեր ձեռքումէի բեմը այն միջոցին : (Տալիս է նորան ապահովագիրը : Իգա ընդունումէ այն և անփոյթ կերպով թողնումէ սեղանի վերայ : Յետոյ վերադառնումէ դէպի նստարանը) : Եւ այսպէս, դուք այս տեղ մեզ կուրախացնէք :

Իգա. (Նստելով) : Ինչո՞վ :

Բօլֆ. Մեր քաղաքում կօնցերտ տալով :

Իգա. (Բացասական նշան անելով) : Ո՛չ : Կօնցերտների ժամանակը ինձ համար անցել է :

Բօլֆ. Անցել է :

Իգա. Այո՛. յաւիտեան : Ես այնքան երգել եմ, որ էլ երգել չեմ կամենում : Մի՞թէ կարելի՞ է աշնպիսի յիմարութիւն անել, և բոլոր յաղթանակներից յետոյ — տեսնել հասարակութեան մէջ կատարեալ անտարբերութիւն :

Բօլֆ. Դուք ի՞նչ տխուր տրամադրուած էք : չընայելով, որ դեռ բուրրովին երիտասարդ էք և թովիչ՝ ինչպէս առաջ :

Իգա. (Տխուր ժպտալով) : Շնորհակալ եմ ձեզանից : Բայց դուք տեղ մի խնդրէք : Ես յճոնել եմ այլ ևս բեմի վերայ չերեալ : Ղգումեմ, որ

պատուումով։ Այժմ՝ ես կամենում եմ հանգստանալ, սեպհական բնակարան ունենալ, ուր կարողանամ ապրել ինչպէս իմ տան մէջ։ (Բօլֆ լսիկ ներքեւ է նայում։ Իդա ինքն իրան)։ Ի՜նչպէս նա կը զարմանայ . . . (բարձրաձայն) ո՛հ։ Եթէ ինձ մօտ լինէր իմ երեխան։

Բօլֆ։ (Նայում է նորա վերայ զարմացմամբ)։ Ինչ ասացի՞ք, ձեր երեխան։

Իդա։ (Տխրութեամբ)։ Այո՛, իմ երեխան։

Բօլֆ։ Ես չեմ հասկանում, թէպէտ լսել եմ, որ դուք ամուսնացած էք եղել . . . շատ տարիներ նորանից . . . շատ ջանքով ժամանակ . . . Բայց թէ դուք ունեցած էք որդիք, ես չը գիտէի։

Իդա։ (Քիչ լուութիւնից յետոյ)։ Այո՛ որ չը գիտէր այդ մասին։

Բօլֆ։ Հը՛մմ։ Ես ձեզ հասկանում եմ։ Ինչո՞ւ հրաժարուցիք ձեր երեխայից կամենում էք ասել (լուում)։

Իդա (Վեր է կենում և մօտենում պատուհանին դէպի աջ, Ինքն իրան)։ Ինչպէ՛ս ծանր է մարդու անցեալ վիշտը միտք բերելը։ Բայց ես կամենում եմ պարտաւոր եմ։ (Մտիկ տալով պատուհանին. բարձրաձայն)։ Ես կարող եմ պատմել ձեզ այս պատմութիւնը. բայց ես վախում եմ, որ ձեզ դժուար լինի հասկանալ ինձ։

Բօլֆ։ (Նղնայէս վեր է կենում, անշարժ, սառնութեամբ)։ Ես կաշխատեմ ձեզ հասկանալ։

Իդա։ (Նստում է ձեռքով ծածկելով աչքերը. խոր ախ է քաշում, յետոյ ասում է, չընայելով Բօլֆի վերայ)։ Երբ ես դեռ շատ ջանքով էի ո՛հ. ինչպէս յիմար էի այն ժամանակ։ Այն միջոցին էլ ես երգում էի։ Ես ծանօթացայ մի ջանքով երիտասարդի հետ. գնահատեցի նորա խելքը, ջերմ զգացմունքը, մտքի եռանդը. և տեսնում էի նորա մէջ շատ ընտիր յատկութիւններ. մենք միմեանց սիրեցինք և ես ամուսնացայ նորա հետ։ Յետոյ յանկարծ ես հոգաւոր անուն ստացայ. Իշխանները և կոմսերը ինձ հաճոյանալ էին աշխատում. այլ ևս իմ ամուսինը ինձ չէր դուր գալիս. նա կասկածոտ, կամապաշտ, դիւրագրգիռ էր. նորա ձեւերը և իրան պահել չը կարողանալը բարկացնում էին ինձ . . . նա առաջուան պէս կամենում էր ինձ հրամայել։ Մենք շատ անգամ կռվում էինք միմեանց հետ։ Վերջապէս մէկ երեկոյ — այդ սարսափելի երեկոյ էր — նա փորձ փորձեց ինձ էլ իրան էլ սպանել։ Ես նորա ձեռքից խլեցի խնջարը. տանից դուրս արի — և նա էլ չը վերադարձաւ։

Բօլֆ։ (Քիչ լուութիւնից յետոյ)։ Ոչ երբէք։

Իդա։ Ոչ երբէք։ Նա սկսեց ուրիշ քաղաքում զբօսասէր կեանք վարել . . . Ես չեմ կամենում նորա անունը տալ։ Այնպիսի կեանքը հասցրեց նորան սխալանքների, խիստ յետոյ յանցաւորութեան . . . որ անպատկութեամբ ծածկեց նորա անունը . . . Մեր բաժանուելուց կէս տարի յետոյ, ծնեցի երեխայ, (Վեր է կենում տեղիցը և սարսափից դողում է)։ Նորա՛ որդին։

ԲՕԼՓ. Հըմմ:

Իգա. Մայր գառնալով՝ ես ինձ անբախտ էի համարում՝ և առում էի իմ ամուսնուն. ջախջախուած բարոյապէս, հիւանդ ֆիզիքապէս և մասամբ արդէն կշտացած կեանքից, ես մօրաբրոջս մօտ ապաստանաւան գտայ, որ իւր ամուսնու հետ ապրումէր լեռնային գիւղերից մէկի մէջ, ուր նա պանդոկ էր պահում, նոքա ազնիւ և պարզ մարդիկ էին. այժմ նոքա արդէն կենդանի չեն. Երբ որ ես կազդուրուեցի, այն ժամանակ իմ մօրաբոյրս, որ երեխաներ չունէր՝ խնդրեց որ տամ նորան իմ երեխան դաստիարակելու, հաւատացնելով թէ, երեխան միայն իմ ազատութիւնս կը կորցնի մէկ քաղաքից միւսը փոխադրվելու ժամանակ, և թէ, առանց երեխայի վերագառնալով դէպի քաղաքական կեանքը, ես դարձեալ ուրախ կը լինիմ և կըսկսեմ պարապել իմ արհեստովս: Ես համաձայնուեցի մօրաբրոջս խնդրին և թողնելով նորա մօտ մանուկը, երգումէի թատրոնի բեմի վերայ և հնձումէի դափնիներ բոլոր մայրաքաղաքներում: Յաղթանակների ետեւից վազ էի տալիս, նորա համար՝ որ նոքա խեղդումէին իմ մէջ թունաւորուած անցեալիս զգացողութիւնը (առանց վստահութեան) և երեխայի մասին միտքս . . . (Երբ հառաչանք է արձակում): Այսպէս անցնումէին տարիներ և ոչ ոք չէր իմանում այդ բանը, Ինձ ամօթ էր գրել, կամ ասել այդ անձանցօք էակին՝ դժւ իմ երեխաս ես, վերադարձիր դէպի քո մայրը. իսկ մօրաքոյրս այնպէս բախտաւոր էր և բաւական՝ դաստիարակելով իմ դուստրը . . . (Յուշիկ ցածացնելով իւր ձայնը): Բայց երբ որ իմ գուետրօ դարգացաւ . . . :

ԲՕԼՓ. (Ջարմանալով): Ջարգացաւ:

Իգա. Երբ որ ես սկսայ վարել աւելի հանդարտ կեանք, ցանկացայ այլ ևս միայնակ չըմնալ այլ ունենալ ինձ մօտ մէկին, որի հետ կարողանայի ես կապուել բոլոր սրտովս . . . Այն ժամանակ կամեցայ գրել իմ դստերս որ գայ մօտս: Բայց նա չըլսեց, նա չէր կամենում. Իմ բոլոր նամակներս դարձնումէր ինձ, Ոչինչ չէր ընդունում ինձանից, ոչինչ, Ես տեսնումէմ, դուք դատապարտումէք ինձ . . . Դատապարտեցէք ոչ թէ մենակ ինձ, դատապարտեցէք և իմ դստերս:

ԲՕԼՓ. (Ջրղցի յանկարծ դադար տալուց յետոյ): Ես չունիմ իրաւունք դատապարտելու ում և իցէ: Բայց ներեցէք ինձ՝ ես ամիշած եմ ձեր զրոյցով. ես չեմ կարողանում հասկանալ . . . Թողլ տուէք առաջարկել մէկ հարց. Ի՞նչ բանի համար է ձեր պատմութիւնը, Ինչո՞ւ համար դուք յայտնեցիք ինձ յանկարծ այդ գաղտնիքը:

Իգա. (Փոքր ինչ յուզուած): Ինչո՞ւ համար.— ճշմարիտ ես ինքս էլ չըգիտեմ: Պաշտօնուայ անցածը այնպէս կենդանացաւ իմ յիշողութեանս մէջ, որ ակամայ պատմեցի նորա մասին, բոլորովին մոռանալով, որ ես ունիմ ձեզանից մի մեծ խնդիր, եթէ միայն համաձայնէք կատարել այժմէն իսկ . . .

Բօլֆ. (Բաւական սառնութեամբ). Վաշխատեմ որքան կարելի է.

Իգա. Բայց ասեմ և համառօտ. Ես հրաժարուցի աղջիկս ինձ մօտ պահելու մտքից, որովհետեւ նա ինքը չէր ցանկանում ապրել ինձ հետ. Բայց միայնակ մնալ էլ չեմ կամենում. (Անվստահ). Ինձ խորհուրդ տուին ընկեր շինել այն ջահիլ տիկնոջը, որ բնակումէ ձեր գործարանի շինութեան մէջ . . . կարծեմ ձեռնոց շինելու բաժնում.

Բօլֆ. Այո՛:

Իգա. Նա կատարումէ ձեզ մօտ համարակալի՞ պարտաւորութիւն (փոքր ինչ գժուարութեամբ՝ ընդհատելով խօսքերը). Ագաթա Շտերն . . . ջահիլ որբեայրին . . . ես կը ցանկայի իմանալ ձեր կարծիքը նորա մասին և խնդրել ձեզանից ծանօթացնել ինձ նորա հետ:

Բօլֆ. (Մօտենումէ լոկի գրասեղանին և զանգահարումէ). Ձեր ցանկութիւնը հէնց այս բոլորէս կը կատարուի:

ՏԵՍԻԼ ԵՐՐՈՐԴ.

ՆՈՅՆ ԱՆՁԻՆՔ Եւ ԴԵՄԼԷՐ.

Դեմլէր. (Մտնումէ, իրան վայելուչ պահելով). Դուք կանչուած էիք, Պ. Բօլֆ:

Բօլֆ. (Այն միջոցին, երբ Իգա զարմանալով մօտիկ էր տալիս Դեմլէրի վերայ, որի հետ պատահեց այնպիսի արագ փոփոխութիւն). Տ. Շտերնը դեռ գրասենեակումն է:

Դեմլէր. Այո՛ Պ. Բօլֆ. (Նայումէ իւր ժամացուցի վերայ). Դեռ ամբողջ ժամ է մնում մինչև պարապմունքի վերջացնելը գործարանում:

Բօլֆ. Ասացէք Տ. Շտերնին, որ ես խնդրումեմ նորանից այժմէն իսկ վերջացնել պարապմունքը և գալ այստեղ. ինձ հարկաւոր է տեսնել նորան:

Դեմլէր. Այս բոլորէս կը կատարուի, Պ. Բօլֆ. (Դուրս է գնում):

Իգա. (Վերջ գուարթութեամբ). Դուք ճշմարիտ էք, այդ արեւոյդը այժմ չի ճանաչվում, բոլորովին լուրջ է և իրան վայելուչ է պահում:

Բօլֆ. Նա սառը ջրում լողացաւ և իւր գլխին քարոզ կարդաց. Դուք այս բոլորէս կը ծանօթանաք ջահիլ որբեայրի հետ. բայ՛, ի՞նչ պատահեց ձեզ:

Իգա. (Զանք է անում ծածկել իւր մէջ անհանգստութիւնը). Ո՛չինչ, (Դարձեալ նստումէ). Բայց ի՞նչպէս է ձեր կարծիքը նորա մասին:

Բօլֆ. Ամենալա՛ւ (ջերմ զգացմունքը զսպելով). Նա զարմանալի բարի է և սաստիկ համակրելի. Իւր պարտաւորութիւնները գրասենեակում նա օրինակելի ճշտութեամբ է կատարում. միշտ տխուր է և լուռ. Ես կարծումեմ որ իւր կեանքում շատ դառնութիւններ է փորձել:

Իգա. (Իւր մէջ յուզուած). Ո՛հ. (Բարձրաձայն) ինձ ասացին՝ թէ նա շատ պարկեշտ կեանք է վարում և միայնութիւնը սիրումէ:

Բօլֆ. Այո՛, ճշմարիտ է, նա կրթութիւն է ստացել իւր կարողութիւնից բարձր. նա միայն չի ապրում, այլ մի չափահաս այրի կնոջ հետ, որ պարապում է ծոպեր մարրելով, ապրում է շատ պարկեշտ՝ չի նուժեան կտակ կողմում սրահի մէջ, տանիքի տակ, Ի՞նչ պատահեց ձեզ:

Իգա. (Յուզուած վեր է կենում տեղից). Նա դալիս է (Շտապում է անցնել դէպի ձախ բացուած դուռը):

ՏԵՍԻՒ, ԶՈՐՐՈՐԴ.

ԲՈԼՖ. ԻԴԱ ԵՆ ԱԳԱԹԱ ՇՏԵՐՆ.

Ագաթա. (Մտնում է թուխ շորեր հագած. մտնում է Բօլֆին, չընկատելով Իգային). Դուք կամենում էիք ինձ տեսնել, Պ. Բօլֆ:

Բօլֆ. (Վանդնելով պատուհանի մօտ դէպի աջ). Խնդրեմ նստէք, (Մտիկ տալով Իգայի կողմը ինքն իրան). Ինչո՞ւ համար է թագչում, (Բարձրաձայն). Գործը յատկապէս ինձ չէ վերաբերում, այլ ձեզ, Տ. Շտերն (Թեթեւ անբաւականութիւն արտայայտելով). Ես լսել եմ որ դուք մտադիր էք ինձ թողնելու:

Ագաթա. (Զարմանալով). Այդ ո՞վ ասաց ձեզ, ես բնաւ մտքովս անդամ չեմ անցրել:

Բօլֆ. (Վարանեալ ձգում է սուր հայեացք Իգայի վերայ, որ կանգնած զրան մէջ՝ ուշադրութեամբ զննում է Ագաթային). Ինչ և իցէ, հաւանական է, որ ես այնպէս չեմ հասկացել, երևի, ձեր անուշով առաջարկութիւն է արած, որի մասին դուք չըզիտէք ոչինչ, (Նոր ձգում է հայեացք Իգայի վերայ). Ձեզ գովել են մի տիկնոջ առաջ առաջարկելով նորան ընդունել ձեզ իւր մօտ ընկեր:

Ագաթա. (Նայելով Իգայի վերայ, ճիշ է արձակում անակնկալ դէպքից). Իմ մայրն է:

(Բօլֆ բոլորովին տարակուսած և յուզուած՝ մտիկ է տալիս լոկ կերկուսի վերայ էլ. Ագաթան տեսնելով, որ Իգան մտնում է իրան, մի քանի քայլ յետ ու յետ է գնում, բռնում է ամուսնի մէջքը և մտիկ է տալիս նորա երեսին ապշութեամբ):

Իգա. (Այլադուստ, աշխատելով պահպանել անդորրութիւն, Բօլֆի հայեցուածքին հայեցուածքով պատասխան տալով). Այո՛, այդ ես եմ. Ինձ ատիժ էր հարկաւոր ձեր տունը գալու. ես ի՞նչ թէ ինձ ընկերակից էի պտտում, այլ իմ դուստրը (Գտնալով դէպի Ագաթա՝ ասում է ակամայ ճիգն թափելով). Դու ուրեմն ինձ ճանաչեցիր:

Ագաթա. (Խոժոռ մտիկ տալով բոլոր ժամանակ Իգայի վրայ). Ճանաչել դժուար չէր: Ի՞նչ անդամ եմ տեսել ձեր լուսանկար պատկերը (Դէպի Բօլֆը դառնալով). Դուք ուրիշ ոչինչ չունի՞ք ասելու ինձ, Պ. Բօլֆ:

Իգա. (Յետ ու յետ գնալով դէպի դուռը), Ո՛չ, դու պոսպէս այս-
տեղից դուրս չես գնալ, Աւերջապէս ես տեսնուածմ' քեզ մօտից . . .
Ո՛հ. ինչ հայեցումա՞ք, Բայց դու պէտքէ ինձ լսես . . . մինչև այն ժա-
մանակ դու այստեղից դուրս չես գնալ, ես անիրաւ էի, խոստովանվու-
մեմ' այս նորա առաջ, քո առաջ, երկնքի առաջ, ես վաղուց ինձ դա-
տապարտուածմ' դորա համար և շարչարվում, Եթէ մայրը ասումէ այս-
պէս բացարձակ իւր դատերը, այն ժամանակ դուստրն էլ պէտք է ներէ
իւր մօրը, (Դառնալով դէպի ԲօլՖը), Օգնեցէք ինձ՝ համոզել նորան:

Ագաթա. (Իգային), Այստեղ ո՛չ որ օգնել չի կարող. այդ բոլորո-
վին դուր է. Բսան տարուայ ընթացքում դուք ինձանից հրաժարուե-
ցիք և մոռացաք իմ՝ գոյութեան մասին. և այժմ՝ կարծումէք, որ այս-
պիսի ընթացքը կարելի է մոռացուիլ և ներուիլ դատեր կողմանէ: Եթէ
ուրիշները ներել են, ես ներել չեմ՝ կարող, չունիմ կարողութիւն, երբ
որ դուք ապրումէիք առանց ինձ, այն ժամանակ ձեր կուռքն երաժըշ-
տութեան արուեստն էր, դէ՛ դարձէք դարձեալ դէպի նա. Արկնեցէք
դորա հետ, ինչ որ ասել էիք ձեր՝ ինձ զրաժ նամակների մէջ.
ասացէք ձեր (կուռքին) նախկին սիրոյ առարկային, որ դուք ձեզ մի-
այնակ էք զգում, որ դուք պտուռւմէք հասարակութիւններ, որ ձեզ
առանց սիրոյ աշխատէս ապրելը սրտնեղութիւն է, Արուեստից պահան-
ջեցէք սէր և հասարակութիւններ, այլ ո՛չ լժէ ինձանից:

Իգա. Դ՛ուստր իմ, Զաւակս, Ո՛չ. այդ մենակ չէր իմ շարժառիթը,
եթէ դու բոլորը գիտենայիր. . .

Ագաթա. ես գիտեմ. — այդ մասին դուք գրել էիք ինձ, Որովհետեւ
ամաչումէիք իմ հօր վարքից, այդ պատճառով չէիք կարողանում, չէիք
ցանկանում ինձ — նորա դատերը տեսնել, Ահա երկրորդ պատճառը,
Բայց թէ ես ձեր դուստրն էի, թէ դուք պատասխանատու էիք իմ դո-
յութեան համար, թէ ես կատարեալ իրաւունք ունէի ձեր սիրոյն —
այս բոլորը մի փոքր անգամ ձեզ չէր ծանրացնում, (Նկատելով Իգայի
ցանկութիւնը նորան պատասխան տալու), Հապա՞ռի, եթէ ոչ դուք
թոյլ տուեցիք դատարարակել ինձ զեղջկական գերդաստանի մէջ, Մի՞թէ
դուք չըտուի՞ք ինձ երկխոյ ժամանակս օտար ընտանեաց, ուր կարող
էին ինձ անել՝ ինչ կամենային, Ճշմարիտ է, այդ գերդաստանը բարի էր
դէպի ինձ, ինձ չըխաջրեց. այն փողերով, որ դուք առատութեամբ
այնպէս ուղարկումէիք՝ ես հազուատ ունէի և կուշտ էի, Ո՛հ, ես ոչ
մի բանում՝ պակասութիւն չունէի, մինչև անգամ՝ մտերմութեան
զգացմունքի մէջ ինձ չէին մերժում՝ այն պատճառաւ՝ որ այդ ընտանիքը
ինձ սիրումէին ինչպէս իրանց դուստրը, Բայց դուք, ինչպէս հիմա ձեզ
տեսնումեմ՝ այնպէս զարգարուած՝ ինձ համար ուրիշ մարդկանց դասա-
կարգից էք, դուք, ինչպէս առաջ, նշնայէս և այժմ, — ինձ համար բո-
լորովին օտար էք, Մի՛ արգելէք ինձ, ես ձեզանից ոչինչ չեմ՝ կամե-
նում: Մնաք բարեաւ:

Իգա. Ո՛չ, ո՛չ, ո՛չ (Կանգնումէ դրան մէջը):

Ագաթա. (Ձայրացած). Մի խափանէք ինձ դուրս գնալու: Հեռացէք դռնից, Կրկնումեմ, ինձ մի արգելէք:

Իգա. (Վախենալով հեռանումէ դռնից). Եւ այսպէս է խօսում գուետրը իւր մօր հետ:

Ագաթա. (Մօտենումէ դռանը, յետոյ կանգ է առնում երեսը շուտաւելով դէպի Իգա). « Իւր մօր հետ: Ես ձեզ բոլորը կասեմ մնաք արևի ժամանակ, ինչ որ մտքումս ասել եմ իմ ամուսնոյ գերեզմանի մօտ: Նա ինձ համար ամեն բան էր՝ հոյր, մայր, բարեկամ: Աս այն սիրովն եմ սիրում նորան, որից դուք հրաժարուեցիք. ես նորան սիրումէի այնպիսի մտերմութեամբ և շնորհակալութեամբ, որ մեռնելու միջոցին ասաց ինձ. «Ո՛հ, որքա՛ն ես քեզ հետ երջանիկ էի»: Նա ողաւտեց ինձ այն ժամանակ, երբ հեռացայ գիւղից, հալածուած աշխարհ տեսնելու ծարաւութիւնից, ուր ինձանից թագնուել էին մայրս և հոյրս: Եւ երբ որ ես իմ կամքիս թողած՝ մօտ էի անկման, նա ինձանից ձուլից պատուաւոր կին . . . : Նա տուեց ինձ հոգեկան խաղաղութիւն, որի մասին ձեր հասարակութեան մէջ սակաւներն ունին հասկացողութիւն, որը ես էլ այն ժամանակ չունէի: Նոյնպէս նորան եմ պարտ իմ կրթութեամբս: Եթէ դուք տայիք ինձ դորա մի մասը միայն, — ո՛հ, ինչպէ՛ս կրսիրէի ձեզ, (Հաղիւ պահելով իւր արտասուքը, համարեա թէ հեկեկալով). Բայց որ այժմ լաց եմ լինում, մի կարծէք թէ ձեզ համար է իմ լացս. . . : Այդ արտասուքը — է պարզեա իմ ամուսնոյ յիշատակին: Երեք տարի է, որ նա գերեզմանումն է: Նա չի կարող ասել ինձ՝ ինչպէս դուք՝ արբի ինձ մօտ: Բայց ես կըմնամ նորա հետ . . . Իսկ ձեզանից խնդրումեմ թո՛ղ տալ ինձ, Պահութիւն Աստուծոյ եւ կարօտութիւն չունիմ ոչ ինձ համար ոչ էլ իմ երեխայիս: (Կամենումէ հետանալ):

Իգա. (Եռնալով յոյժ, ձեռքը քսումէ երեսին). Ինչպէ՛ս (բղավելով). Կաց, կաց . . . Այս ի՞նչ բան է . . .

Բօլֆ. (Մօտենումէ Իգային, մինչ գեո Ագաթա կանգնած էր ապշած). Ի՞նչ պատահեց ձեզ:

Իգա. Նա երկխոյ ունի: Միթէ նա այդ չասեց:

Բօլֆ. (Ձարմանալով). Միթէ դուք չըգիտէիք:

Իգա. Ինչպէ՛ս կարող էի իմանալ, երբ նա ինձ ոչինչ չի գրել, (Դէպի Ագաթա). Երգո՛ւմ եմ տալիս քեզ ասա՛ դու երեխոյ ունի՛ս, Իմ գոտիք զաւակ . . .

Ագաթա. (Դէպի մայրը ցաւակցական զգացմունքի հետ կոռելով). Դուք ինձանից ի՞նչ էք ուզում:

Իգա. Բո՛ւ երեխայիդ ես ոչինչ չեմ արել: Ես ցանկանումեմ նորան տեսնել, ես կամենումեմ նորան սիրել այնպէս, ինչպէս ոչ ոքի չեմ սիրել: Ես կամենումեմ նորան վարձատրել բոլոր այն շարութեան փո-

խորէն, որը դու կրել ես ինձանից . . . (Դառնալով Բօլֆին), Օգնե-
ցէք ինձ համոզել նորան, ես կը դաստիարակեմ նորա դուստրը, ինչ-
պէս արքայազն կամ եթէ նա արու զաւակ ունի . . . (Բօլֆը հա-
տատումէ զլուսը շարժելով), Ա՛խ, արու զաւակ, ես ոչինչ չըզիտէի,
թոյլ տուր նայել նորա վերայ, կամենումեմ ապրիլ նորա համար,
թոյլ տուր ինձ լինիլ նորան մայր, Տէրը կը վարձատրի քեզ սորա հա-
մար:

Ազաթա. (Բացասական նշան տալով, դառնումեմ), Դուք չէք
արժանի յիշել Աստուծու անունը:

Բօլֆ. (Հեղումեմ), Տիկին Շտերն, լաւ կը ազատեցէք ձեր խօս-
քերը:

Ազաթա. Ինչո՞ւ համար են ձեր խօսքերը Պ. Բօլֆ, Շատ գիշերներ ես
մտածել եմ, թէ ինչ պէտքէ անեմ և խօսեմ եթէ պատահենք միմեանց
ինչպէս այսօր, և միշտ իմ զգացմունքներս և մտածութիւններս պիտի
բանուան են կայացել, ինչ որ ես այժմ ասացի (դառնալով դէպի Ի-
դան) ես էլ մայր չունիմ. ես միայն որդի ունիմ, (Իդա թուլացած՝
նստումէ աթոռի վերայ, Ազաթա մօտենումէ նորան, սկզբում ձայնը
պահելով), Երբ գիւղից ես հեռացայ, կամենալով ծանաչել աշխարհը
և շիմանալով ուր գիմել, զգացի քաղցածութիւն. այն ժամանակ ես
մտածեցի ձեր մասին — իմ «հարուստ մօր» մասին — և վճռեցի պտրտել
գտնել ձեզ, Լրագիրներից ես տեղեկացայ, թէ ուր է ձեր բնակութիւ-
նը . . . Եկայ այն տեղ, գիշեր էր ժամանակը, գտայ ձեր բնակա-
րանը, Ձեր բնակարանի լուսամուտները շքեղ զարդարուած էին.
ձեզ մօտ շատ հիւրեր կային, Փողոցից ամեն բան երևումէր և ես
լսումէի ձեր երգեցողութիւնը. գիշերը ջերմ էր, լուսամուտները բաց
էին, ես մոռացել եմ այն երգը, դուք երգումէիք մօր սիրոյ մասին առ-
իւր նաղելի մանկիկը, Դուք հիանալի երգումէիք, բոլոր հիւրերը ծա-
փահարումէին ձեզ հրճուանօր, Իսկ ինձ համար ձեր երգը ամենից
սարսափելի էր թվում, որքան որ մինչև այն օրը լսել եմ, ես անցայ
փողոցը դէպի մէկ ուրիշ տուն, և երգուեցի լաւ համարիլ քաղցածու-
թիւնից մեռնել, քան դալ ձեզ մօտ, երգուեցի յաւիտեան մոռանալ
ձեզ, ինչպէս դուք ինձ մոռացել էիք, ես վճռեցի իմ բոլոր կեանքումս
մնալ առանց մօր, Գնացէք, երգեցէք թատրոններում, կօցեցի անբուժ
մայրական սիրոյ մասին «առ նաղելի մանկիկն» . . . Այն սարսափելի
գիշերը ես թողի ձեզ, (Հեռանումէ արագ):

Իդա. Ազաթա. (Թոյլ ձայնով), Ուշքս գնումէ (Ընկնումէ քաղկա-
թոռի վերայ):

(Ա. Ե. Ե. Ե. Ե.)

(Թ. Ե. Ե. Ե.) Զ. Տ. Զարթանց.